ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված գործակարգավարական խորհրդակցության

16.03.2026թ. **ք.Վանաձոր**

Նիստը վարում էր մարզպետ Ա.Մկրտչյանը.
Մասնակցում էին
Ա.Ղարիբյանը -մարզպետի տեղակալ
Լ.Աբրահամյանը - մարզպետի խորհրդական
Հ.Ադամյանը - մարզպետի խորհրդական
Հ.Հակոբյանը - մարզպետի օգնական
Է.Կռոյանը - մարզպետի օգնական
Մ.Դալլաքյանը - գլխավոր քարտուղար
Կ.Ադամյանը, Ա.Շիրինյանը, Ռ.Պողոսյանը, Ա.Երիցյանը, Ռ.Մարգարյանը, Մ.Խեչումյանը, Ա.Թումանյանը, Ա.Հակոբյանը, Լ.Մաթոսյանը, Է.Հախվերդյանը, Ա.Բեջանյանը, Գ.Մելիքսեթյանը, Ա.Մալոյանը - մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. **Նախորդ ժամանակաշրջանի ընթացքում կատարված աշխատանքների և տրված հանձնարարականների վերաբերյալ հաշվետվություն**
   /զեկուցող Լոռու մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ/
2. **Այլ հարցեր**:

Ելույթ ունեցավ ՀՀ Լոռու մարզպետ Ա.Մկրտչյանը, նա ներկայացրեց նախորդ ժամանակաշրջանի ընթացքում կատարված աշխատանքների և տրված հանձնարարականների վերաբերյալ տեղեկատվություն:

ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարները ներկայացրեցին կատարված աշխատանքների և տրված հանձնարարականների վերաբերյալ տեղեկատվություն:

Լոռու մարզպետը հանձնարարեց.

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Ա.Ղարիբյանին, աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ.Մարգարյանին՝

1.1 Համատեղ քննարկել և ներկայացնել առաջարկություններ Վանաձոր համայնքի սուբվենցիոն ծրագրերի ներկայացման, դրանց ժամկետների և իրատեսական ու իրագործելի լինելու վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում ներգրավել նաև Վանաձորի համայնքապետարանի համապատասխան աշխատակիցներին:

1.2 Այսուհետ մանրակրկիտ ուսումնասիրել համայնքների կողմից ներկայացվող սուբվենցիոն ծրագրերի նախագծանախահաշվային փաստաթղթերը, մասնավորապես դրանցում ներառված ենթակառուցվածքների ստեղծման, բակերի և տարածքների բարեկարգման աշխատանքների կատարման հնարավորությունները, անհրաժեշտության դեպքում լրացուցիչ քննարկումների նպատակով գրություններով դիմել շահագրգիռ կազմակերպություններին:

1.3 Ուսումնասիրել և սեղմ ժամկետում ներկայացնել տեղեկատվություն և առաջարկություններ Վանաձոր համայնքի դեպի մարզադաշտ տանող 3 էվակուացիոն ճանապարհների կառուցման վերաբերյալ:

2. ՀՀ Լոռու մարզպետի խորհրդական Հ.Ադամյանին, աշխատակազմի գլխավոր քարտուղար Մ.Դալլաքյանին՝

Ներկայացնել ամփոփ տեղեկատվություն և առաջարկություններ մարզային ենթակայության դպրոցների, ինչպես նաև համայնքային ենթակայության կազմակերպությունների և նախադպրոցական հիմնարկների կամավոր ատեստավորումների գործընթացի ներդրման և արդյունավետության վերաբերյալ:

X _____

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ՄԿՐՏՉՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99